



Լուսանկար Ն. Սուջայեանի
Այս շէնքի աջ կէսում տեղաւորւած էր հայ տպարանը. ձախում՝ նախկին հոգեոր ծխական դպրոցը

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՏՊԱՐԱՆԸ

Յիրաւի ծանր տպաւորութիւն է անում այն հանգամանքը, երբ մի անցած իրողութեան առիթով պատմական տեղեկութիւն կամ անցեալից մնացած մի հետք ևս որոնում և չես գտնում:

Այդ կողմից ևս Սստրախանը կատարեալ անապատ է ներկայացնում:

Ոչ մի յուշարձան, ոչ մի յիշատակարան չէ մնացել, որ անցեալը յիշեցնէր ու անցածի մասին տեղեկութիւն տար:

Սստրախանի հայոց կոնսիստորիայում կան մի երկու վախտ մատեաններ, որոնք կազմում են Յովսէփի արքեպիսկոպոս Արզութեանի ձեռագիր յիշատակարանները և գրանք ևս շատ քիչ բան են առում անցածի մասին: Դրանք հանգուցեալ արհիքի աւելի վիճակային տուրքի մատեաններն են քան յիշատակարանները և հթէ պարունակումն պատմական տեղեկութիւններ, այն էլ զանազան քաղաքների, եկեղեցիների հիմնարկութեան և օժման թւականներ են:

Մի քիչ աւելի է կանգ առած Պետերբուրգի ճանապարհորդութեան ու այնտեղի տեսակցութիւնների մասին Եկատերինէ Կայսրուհու և զանազան բարձրաստիճան անձանց հետ:

Ի՞նչպէս բացատրել այդ ամայութիւնը: Ականատեսներն առում են, որ Սստրախանի ս. Սստրածածին ա. եկեղեցու զանգատանը գտնուող փոքրիկ խցիկը հնում որպէս թանգարան է ծառայելիս եղել:

Այսաեղ պահելիս են եղել զանազան մեծութեամբ գրչագիր մատեաններ, յիշատակարաններ և բազմաթիւ թղթեաններ:

1852-թւին երջանկայիշատակ Ներսէս Վ-րդ կաթուղիկոսի լիազոր վերահսկիչ Հասան-Զալալեան արքեպիսկոպոսը Սստրախան այցելած ժամանակը, բոլոր այդ հնութիւնները տոնում, տանում է իր հետ:

Սստրախանի կոնսիստորիան վերջն է հասկանում իր սխալը և երբ Գէորգ Վեհապետեան առաջնորդի ժամանակ հարցումն է անում այդ տարածների

մասին, սինողից պատասխան է ստացում, որ այդ բոլոր մտանաները պահում են Սահանի վանքում:

Արգեհք չթոյլ տալ կարծելու, որ այդ տարածների մէջ կան և գործեր Յովսէփի արքեպիսկոպոսի հիմնած Սստրախանի հայոց տպարանի վերաբերեաւ որի գոյութեան մասին տեղումն շատ կցկուր տեղեկութիւններ են մնացել. համարեա ոչինչ:

Պատմապէտ Լէօն գրում է, որ Յովսէփ Արդութեանը իր տպարանը հիմնում է Սստրախանում 1794 թւին, որ գոյութիւն է ունենում մինչև 1827—28 թւականները:

Այդ տեղեկութեան առաջին մասը շատ էլ ճիշտ չէ: Հիմնելէ 1796-ին: Երեք տարի անցած՝ այդանու տպագրում է Վարդան Բարձրաբերգցու «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթիւն հասալիկ գիրը», որից հարիւր օրինակից աւելի մինչև օրս պահուում են կոնսիստորիայի պահարանում: Թուղթը ընտիր է, ափը մաքուր, պարզ, տաները գեղեցիկ: Այս է միայն միայուն փաստը Սստրախանի հայ տպարանի: Գրքի առաջին երես սիրած գրւածէ:

«Հրամանաւ՝ Արբոյ Աթոռույն էջմիածնի Ծայրագոյն Նորիրակի, Հիւսիսային կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիդ Առաջնորդի, Սահանսեցի Երկայնաբազուկ Արդութեան Իշխանապնեայ Տիան Յովսէփայ՝ Պահկազից Սրբագան Արք Եպիսկոպոսի»:

Այնուհետե առանձին գրւածէ:

«Արգեհամք և ծախիւր ի Ղզլար բնակեալ բարեպաշտօն և Մեծահաւատ Լուսանողի Յարութիւնի որպից Պարոն Անտօնի Շամախեցոյ: Յամի տեսան 1797, մարտի 24: Իսկ ի թւին հայոց ՌՄԽԶ:

Ի տպարանի Նորին Բարձր Սրբագութեան Բնդ հովանեաւ Սուրբ Սստրածածնայ Եկեղեցւոյն, որ ի Յաշտարիսան»:

Այս տպարանում՝ տպագրւել է նուև ժամագիրը, որի միայն առաջին թիրթն եմ տեսել, իսկ գիրը, ինչպէս երեւում է, արգէն գործադրւել, վերջացել է Սստրախանում:

Ի՞նչ վերաբերում է Լէօն տեղեկութեան երկրորդ կէսին, որ իր թէ տպարանը գոյութիւն է ունեցել մինչև 1827—28 թւականները, այդ ևս սխալ է: Այս բոպէիս ձեռքիս տակ ունեմ կոնսիստորիայի 1837 թւի մի գործ, որից երեւում է, որ Սերովիք Արքեպիսկոպոսը^{*)} 1837 թւի մարտի 10-ին դիմում է Սստրախանի հայոց կոնսիստորիային հետեւեալ առաջադրութեամբ.

«Պարոն Զինուորական Գաւառապետն Սստրախանայ թղթով ի 4 մարտի № 1035. ծանուցանէ ինձ, թէ ի տպարանի մերում տպին ուսուերէն պէսսպէս թուղթը և խնդրէ զիմ սոսօբէնութիւն, զի մի այսուհետե յաճախեսցին տպագրութիւնը ի ուսւ լեզու որոյ և իցէ տեսակի:

Ես օրինաւոր հոմարեալ զասաջարկութիւն Նորին Գերազանցութեան, հրամանագրիմ Հոգեւոր Կոնսիստորիայից զգուշանալ զի մի ինչ տպեսցի ուսուերէն այսուհետե տասիւր մերովք»:

Կոնսիստորիան էլ հիմնելով առաջնորդի թղթի

^{*)} Ծան օ թ. Սերովիք արքեպիսկոպոսը ժամանել է Սստրախան 1832 թ. և 1847 թւի յուլիսին խօսերայով վախճանեւել է: Թաղւած է Սստրածածին ա. եկեղեցու մէջ հարաւային պատի մօտ:

վրա, որոշում է ատեան կանչել «Հոգեորական տպագրիչ» Մկրտիչ Յովհաննէսեանին (երեխ ապարանի կառավարիչ) և նրան զգուշացնել, որ ոսերէն ոչ մի տեսակի թուղթ չտպագրի մեր տպարտնում, որը արգելւած է քաղաքիս կառավարութիւնից:

Այս բոլորից երեսւմ է, որ տպարանը միայն հայերէն տպագրութեամբ չէր զրադւած, այլ և ոսերէն:

Միենոյն ժամանակ հաստատւում է, որ տպարանը ըստ Լէօփ 1827—28 թւին չէ զադարել, այլ 1837 թւին անդամ զեռ ևս զործում էր:

Աւելին կասեմ—ականատեսներից մէկը, Դ. Ք. Դավաշեանը պատմում է, որ ինքը 1847 թւին, փոքր հասակում, գնում էր Աստւածածին ա. եկեղեցու բակը գիր կարգալու և պարապմունքից ազատ ժամանակը աշակերտների խմբով գնում էին տպարան «Մուկուշի» մօտ (վերև յիշւած Մկրտիչ Յովհաննէսեանը), տեսնելու թէ՝ ինչպէս է նա տպագրում: Այսուհետեւ ականատեսը աւելացնում է. «1848 թւին գնացի Լազարեան ճիմարան և երբ 1852 թւին վերադարձայ, այլ ևս տպարանը չկար»:

Այսպէս ուրեմն՝ Յովհէփ Արքեպիսկոպոսի տպարանը գոյութիւն է ունենում Աստրախանում մօտաւորապէս մինչև 1850-ական թւականները և իր գոյութիւնը պահպանում է առաջնորդարանի ներքին յարկի կրպակների արդիւնքից, որպիսի շինութեան վերին յարկում տեղաւորւած էր այդ տպարանը և որը զլանուում է ա. Աստւածածին ա. եկեղեցու բակում:

Իսկ այսուհետեւ ի՞նչ եղաւ այդ պատմական տպարանի վիճակը:

Դարձեալ ականատեսների պատմածով՝ տպարանի բոլոր իրեղէնները, արկդ, արկդ տառերը, բոլորովին անխնամ ածւած էին առաջնորդարանի ներքին յարկի մի նկուղում, մինչև 1889—91 թւերին երես փոխան Յովհաննէս Մհանիկհանը անպէտք և անգործադրելի իրերի շարքում վաճառեց նաև տպարանի թշւառ մնացորդները: